



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Բ Ա Կ Ի Մ Ա Բ Զ Պ Ե Տ

<< 28 >> 05 2018թ.
N: _____

ք. Գյումրի, Գ. Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐԶ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ հայրենակիցներ

Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս համազգային տոնի՝ Հայաստանի Առաջին Հանրապետության և մահիսյան հերոսամարտերի 100 ամյակի կապակցությամբ:

Բաշ-Ապարանի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Սառնաղբյուրի հերոսամարտերը և Մայիսի 28-ը հայոց պատմության այն շրջադարձային էջերից են, որոնք դարձան մեր ժողովրդի՝ իր իսկ հայրենիքում ազատ և անկախ ապրելու, պետականություն ունենալու դարավոր երազանքների իրականացումը: Չնայած իր գոյության կարճատևությանը, Հայաստանի Առաջին Հանրապետությունը կարողացավ սերունդներին փոխանցել արժեքային նոր համակարգ, որը հենվում է պետական մտածողության, քաղաքացիական գիտակցության ու ժողովրդավարության սկզբունքների վրա: Այսօրվա սերունդը կրկին ապացուցեց, որ իրենց նախնիների արժանի ժառանգն է:

Հայ ժողովուրդն իր դարավոր պայքարի արդյունքում ստեղծեց նոր անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը:

Անկախության ճանապարհը դյուրին չեղավ մեզ համար: Այսօր մենք արժանին ենք հատուցում մեր ժողովրդի նվիրյալներին, ովքեր անկախության սուրբ պայքարին նվիրաբերեցին իրենց կյանքը:

Հավերժ փառք նրանց հիշատակին:

Համոզված եմ, որ միասնական ջանքերով կկարողանանք պահպանել մեր ձեռքբերումները, դրանց ավելացնել նորերը և դիմակայել մարտահրավերներին:

Շնորհավորելով բոլորիս Հանրապետության տոնի առթիվ՝ մաղթում եմ խաղաղություն, երջանկություն, ստեղծագործ աշխատանք՝ հանուն անկախ Հայաստանի հզորացման ու ժողովրդի բարեկեցության:

Ս.ՊԵՏՏՐՈՍՅԱՆ

պարտականությունները կատարող